# Շախմատային Հայաստան

№33(820)

ՀՈՒՆԻՍ, 2008

CHESS IN ARMENIA MAGAZINE

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1972 Թ. ՅՈՒՆՎԱՐԻՑ


# ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

## ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ №4




*Անհավատալի է, բայց շախմատը մնաց առանց Կարեն Ասրյանի...*

ԱՍՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ. Երեւան, 9-15 հունիսի 2008 թ.

| №№ | Մասնակիցներ | 1 | | 2 | | 3 | | 4 | | 5 | | 6 | | 7 | | 8 | | Մ | Տ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | I | II | I | II | I | II | I | II | I | II | I | II | I | II | | |
| 1 | ՍԱՐԳՍՅԱՆ | | | 1/2 | 1 | 1/2 | 1/2 | 1/2 | 1/2 | 1/2 | 1/2 | | | | | 1/2 | 1/2 | 5,5 | |
| 2 | ՄՈՐՈԶԵՎԻՉ | 1/2 | 0 | | | 1/2 | 0 | 0 | 1/2 | | | | | 1 | 1/2 | 1 | 1/2 | 4,5 | |
| 3 | ԲՈՒ ՔՍԻԱՆԶԻ | 1/2 | 1/2 | 1/2 | 1 | | | | | | | 1/2 | 0 | 1/2 | 0 | 1 | 1/2 | 5 | |
| 4 | ԱՐՈՆՅԱՆ | 1/2 | 1/2 | 1 | 1/2 | | | | | 1/2 | 1/2 | 1/2 | 1/2 | 1 | 1/2 | | | 6 | |
| 5 | ՅԱԿՈԲՅԱՆ | 1/2 | 1/2 | | | | | 1/2 | 1/2 | | | 1/2 | 1/2 | 0 | 0 | 1/2 | 0 | 3,5 | |
| 6 | ԼԵԿՈ | | | | | 1/2 | 1 | 1/2 | 1/2 | 1/2 | 1/2 | | | 1 | 1/2 | 1 | 1/2 | 6,5 | |
| 7 | ԳԵԼՖԱՆԴ | | | 0 | 1/2 | 1/2 | 1 | 0 | 1/2 | 1 | 1 | 0 | 1/2 | | | | | 5 | |
| 8 | ԱԴԱՄՍ | 1/2 | 1/2 | 0 | 1/2 | 0 | 1/2 | | | 1/2 | 1 | 0 | 1/2 | | | | | 4 | |




ՄԵՐ ԷՋԸ ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ

www.armchess.am

ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ ՅՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

# Խոսք Կարենի մասին

## ՇԱԽՄԱՏԱՍԵՐ ԲԱՐԵԿԱՄ

Տաղանդաշատ գրոսմայստերի հանկարծամահ լինելու մասին լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ աշխարհում: Կարեն Ասրյանի անսպասելի վախճանից բառացիորեն րոպեներ անց սկսեցին ստացվել հարյուրավոր ցավակցական հեռագրեր, էլեկտրոնային նամակներ ու հեռախոսազանգեր ե՛ւ տարբեր երկրների շախմատիստներից ու շախմատային գործիչներից, ե՛ւ սփյուռքի մեր հայրենակիցներից, ե՛ւ Հայաստանի մեծ ու փոքր բնակավայրերից:

Կարենի մասին ի սրտե եւ անհուն վշտով ասված այդ խոսքերի մի փոքր մասը ներկայացնում ենք մեր ընթերցողներին:



*Սիրելի բարեկամներ:*

*Ընդունեք իմ խոր ցավակցությունները գրոսմայստեր Կարեն Ասրյանի անժամանակ մահվան կապակցությամբ:*

*Կարենը ոչ միայն համաշխարհային դասի փայլուն շախմատիստ էր, այլեւ հոյակապ տղա, ում հետ ինձ միշտ հաճելի էր շփվել: Աչքերիս առջեւ նրա մտամոլոր ժպիտն է, ժպիտ, որն անչափ տրամադրող էր: Ես սիրում էի Կարենին, ինչպես իմ կրտսեր եղբորը:*

*Ցնցված եմ այս լուրից, եւ ինձ համար շատ ցավալի է խոսել Կարենի մասին անցյալ ժամանակով:*

*Թող հողը վրան թեթեւ լինի, եւ թող նրա հոգին ավելի լավ աշխարհում նիրհի:*

*Եվս մեկ անգամ փոխանցեք իմ ցավակցությունները Կարենի բոլոր մերձավորներին եւ ընկերներին:*

***Զուրաբ Ազմայփարաշվիլի***
***ՖԻԴԵ-ի փոխնախագահ***

*Չգիտեմ՝ ինչ ասել լսածս անսպասելի լուրի կապակցությամբ:*

*Ես եւ Ջենը հայտնում ենք մեր խոր ցավակցությունները մեր ընկերոջ՝ Կարենի մահվան կապակցությամբ ձեզ, նրա ընտանիքին եւ ընկերներին, որոնք այժմ խաղում են խոշոր մրցաշարում Հայաստանում, եւ պատկերացնում եմ, թե որքան դժվար է նրանց համար կենտրոնանալ խաղի վրա:*

*Չգիտեմ՝ ինչ ասել, բայց մեզ բոլորիս վշտացրել է նրա մահվան լուրը:*

***Մոհամեդ Ալ Հիթմի***
***ՖԻԴԵ-ի փոխնախագահ***

*Սա իսկական ողբերգություն է: Իմ խոր ցավակցությունները Կարենի ընտանիքին եւ Հայաստանի շախմատային ֆեդերացիային:*

***Բորիս Կուտին***
***Շախմատի եվրոպական միության նախագահ***

***

*Ֆրանսիական «Բիշվիլեր» շախմատային ակումբը, Ֆրանսիայի թիմային առաջնության 1-ին լիգայի խաղացողները խոր կսկիծով եւ ցավով իմացան գրոսմայստեր Կարեն Ասրյանի անժամանակ մահվան լուրը: Մենք չենք կարող խոսքեր գտնել, հատկապես հաշվի առնելով, որ դեռ երկու շաբաթ առաջ Փարիզում, թիմային առաջնության ժամանակ վայելում էինք նրա ընկերակցությունը:*

*Մենք Կարենին կհիշենք որպես շատ ուրախ, մարդկային անձնավորություն: Շախմատի մեծ չեմպիոն, բայց եւ շատ պարզ երիտասարդ: Մենք կկարոտենք նրան:*

*«Բիշվիլեր» շախմատային ակումբը, Կարենի թիմակիցներս մեր ցավակցություններն ենք փոխանցում Ասրյանի ընտանիքին եւ հարազատներին:*

***Էսպերան Սահաջյան***
***«Բիշվիլեր» ակումբի նախագահ***
***Էթիեն Մենշ***
***«Բիշվիլերի» ավագ***



*Կարեն Ասրյանը «Բիշվիլեր» ակումբի իր թիմակիցների հետ:*

## ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ



Թուրին, 2006 թ. հունիսի 4. օլիմպիական չեմպիոնների տիտղոսը նվաճելուց մի քանի րոպե անց։ Երջանիկ Կարեն Ասրյանը եւ Արտաշես Մինասյանը՝ Հայաստանի պետական դրոշով փաթաթված։

*Մնաս բարով, Կարեն։*

*Մեր հերոսները պետք է հաղթեն համաշխարհային հաջորդ օլիմպիադայում՝ ի հիշատակ Կարենի։ Մենք կրկին այնտեղ կլինենք մեր հայկական դրոշով։*

***Կարեն Կոկչյան***
***Թուրին, Իտալիա***

***

*Խնդրում եմ, ընդունեք իմ անկեղծ ցավակցությունները Կարենի մահվան կապակցությամբ։ Ես սգում եմ ձեզ հետ։*

*Չգիտեմ՝ ինչ են ասում նման դեպքերում, ես ուղղակի խոսքեր չունեմ։ Նա իմ մտերիմ ընկերն էր եւ ընդմիշտ կմնա իմ հիշողության մեջ։*

***Կեմա Գորյաեւա***
***Էլիստա***

***

*Մենք հայտնում ենք մեր խոր կսկիծը բոլորիս կողմից շատ սիրված Կարենի անժամանակ մահվան կապակցությամբ։ Մեզ համար ծանր ու ցավալի էր լսել այդ լուրը։*

*Հայտնում ենք մեր անկեղծ ցավակցությունները Կարենի ընկերներին եւ մտերիմներին, բոլոր հայ շախմատիստներին։*

***Մայա Չիբուրդանիձե, Նինո Գուրիելի, Նինո Խուրցիձե, Մայա Լոմինեիշվիլի***

***

*Սարսափելի լուր է, չեմ կարողանում հավատալ։ Ընդամենը մի քանի օր առաջ զրուցում էինք Կարենի հետ։ Նա պատրաստվում էր ինձ դիմավորել Երեւանի օդանավակայանում...*

*Խնդրում եմ, իմ ցավակցությունները փոխանցեք հարազատներին եւ մտերիմներին։*

***Դարմեն Սադվակասով***

*Խորին ցավով լսեցինք մեր շախմատի շրջանառից մեկի՝ Կարեն Ասրյանի անժամանակ կորստի մասին լուրը։ Սա այն պահերից է, երբ դժվար է գտնել միխիթարանքի խոսքեր՝ ուղղված հարազատներին եւ իր սրտակից ընկերներին։*

*Նրա պայծառ հիշատակը թող միշտ վառ մնա։*

*Մոնրեալի հայ շախմատասերների անունից՝*

***Սարգիս Կավուկչյան***

***

*Մեր սիրելիներ։*

*Խորին ցավով կարդացի Կարեն Ասրյանի անժամանակ մահվան լուրը։ Ցավակցություններս եմ հաղորդում ձեզ բոլորիդ։ Ասրված լուսավորի հոգին։ Աստված ուժ եւ համբերություն տա իր ընտանիքին եւ բարեկամներին։ Աստված Ձեզ ուժ եւ կարողություն տա, որ շախմատի նոր Կարեն Ասրյաններ մեծացնեք, որոնք կդառնան ամբողջ հայության պարծանքը։*

*Կյանք ձեզ բոլորիդ։*

***Թագվոր Մաղաղիս***
***Ֆրանսիա***

***

*Սրտի խոր կսկիծով ցավում ենք մեր բոլորի շատ սիրելի լավ ընկեր, բարի, ազնիվ, հայրենասեր, տաղանդավոր շախմատիստ Կարեն Ասրյանի վաղաժամ մահվան կապակցությամբ։ Կարենի մահվան լուրը խոր վիշտ պատճառեց ոչ միայն ծնողներին եւ հարազատներին, այլեւ նրան մոտիկից բոլոր ճանաչողներին։*

*Սիրելի Կարեն, դու հավերժ կմնաս մեր բոլորի սրտերում։*

***Նշան Քեշիշյան, Արմեն Համբարձումյան, Վլադիմիր Շարոյան, Վարուժան Հակոբյան, Անդրանիկ Մատիկոզյան, Մելիքսեթ Խաչիյան, Հարութ Հակոբյան, Գարուշ Մանուկյան, Արմեն Մանուկյան, Հարութ Քեշիշյան, Տաթեւ Աբրահամյան, Մինաս Նորդանյան, Սարգիս Աղայան, Ալեն Մելիքադամյան, AAA շախմատի ակումբի բոլոր անդամները եւ համայն շախմատի երկրպագուները Ամերիկայից***
***Լոս Անջելես***

***

*Ես ցնցված եմ Կարենի հանկարծակի մահվան լուրից, դա սարսափելի կորուստ է մտերիմների, ընկերների, շախմատիստների համար։ Մենք նրա հետ մտերիմ ընկերներ էինք, նա բարի, զգայուն մարդ էր։ Ցավակցություններս եմ հայտնում Կարենի ընտանիքին եւ Հայաստանի բոլոր շախմատիստներին։*

***Բահադուր Ջոբավա***


Կարենը, չնայած իր երիտասարդ տարիքին, նաեւ հմուտ մարզիչ էր։ Նրան իրենց օգնելու խնդրանքով հաճախ դիմում էին ոչ միայն հայ շախմատիստները։ Ասրյանը, մասնավորապես, ստեղծագործական սերտ կապեր ուներ Ղազախստանի ուժեղագույն գրոսմայստեր Դարմեն Սադվակասովի հետ։